«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.դ., պրոֆեսոր Ղամբարյան Ա.Ս.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Իրավունքի տեսության հիմնախնդիրները

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Ներածություն

1.1. Դասընթացի բովանդակության համառոտ նկարագրությունը

«Իրավունքի տեսության հիմնախնդիրները» դասընթացը նվիրված է ժամանակակից իրավաբանական գիտության հիմնարար և վիճահարույց հարցերի խորացված ուսումնասիրությանը, որոնք դուրս են գալիս պետության և իրավունքի տեսության բազային դասընթացի շրջանակներից: Այն հիմնված է հետևյալ հիմնախնդիրների վերաբերյալ դոկտրինալ մոտեցումների և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության վրա.

1. մարդու հիմնական իրավունքների հասկացությունը, պաշտպանության ոլորտը և սահմանափակումը (անձնային և առարկայական ոլորտ, սահմանափակումների համաչափություն).
2. իրավունքից հրաժարվելու տեսությունը. պետականորեն ճանաչված իրավունքից հրաժարվելը, սուբյեկտիվ իրավունքի իրականացումից հրաժարվելը, միջամտության համաձայնություն տալու միջոցով հրաժարվելը և հակահիրավական արարք կատարելու միջոցով հրաժարվելը (forfeiture).
3. սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը. փիլիսոփայական նախադրյալները, հռոմեահիրավական արմատները, կարգավորումը ռոմանագերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերում, իրավական հետևանքները.
4. Հայաստանի Հանրապետությունում իրավական ակտերի համակարգը. նորմատիվ, անհատական և ներքին (լոկալ) ակտերի տարանջատման չափանիշները, «ինքնատիպ» նորմատիվ ակտերը (ձևաթղթեր, օրինակելի պայմանագրեր, վարչական պարզաբանումներ), in rem և in personam ակտերը.
5. ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը. «օրենքի հիման վրա» պայմանը, լիազորող նորմը, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատարանների իրավական դիրքորոշումները.
6. իրավական ակտերի մեկնաբանման խնդիրները. տեքստային, համատեքստային և արտատեքստային մեկնաբանում, պատմական (օրիգինալիստական) մեկնաբանում (travaux préparatoires), ռեալիստական մեկնաբանում.
7. իրավական նորմերի կոլիզիաները և կոլիզիոն նորմերը. lex superior, lex specialis, lex posterior համակարգերը, ճյուղային առաջնությունը, իրավասության կանոնները.
8. contra legem իրավունքի զարգացման դոկտրինը. extra legem-ից տարանջատումը, Գ. Ռադբրուխի բանաձևը, contra legem իրավունքի զարգացման լեգիտիմացումը և զսպման մեխանիզմները, օրինականության սկզբունքի հետ փոխհարաբերությունը.
9. լռության իրավական նշանակությունը. լռությունը որպես իրավաբանական փաստ, լռությամբ (ենթադրյալ) համաձայնություն, լռությունից բխող ֆիկտիվ եզրահանգումներ.
10. լռության իրավական ռեժիմները. լռությունը որպես իրավունքից հրաժարվելու եղանակ (tacit waiver), լռությունը որպես հակահիրավական անգործություն (պասիվ խաբեություն, լռության էստոպել):

1.2. Տրամադրվող ժամաքանակը

Առարկայի ծավալը՝ 108 ժամ, կրեդիտ՝ «3» ECTS:

1.3. Դասընթացի կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ

«Իրավունքի տեսության հիմնախնդիրները» դասընթացը գտնվում է տրամաբանական և բովանդակային կապի մեջ հետևյալ առարկաների հետ.

«Պետության և իրավունքի տեսություն» (խորացնում ձեռք բերված բազային գիտելիքները).

«Սահմանադրական իրավունք» (հատկապես հիմնական իրավունքների, կոլիզիոն նորմերի, ենթաօրենսդրական ակտերի թեմաները).

«Վարչական իրավունք» (ենթաօրենսդրական և ռեգլամենտային ակտերի, վարչական լռության հարցերը).

«Քաղաքացիական իրավունք» (իրավունքի չարաշահումը, իրավունքից հրաժարվելը, էստոպելը, լռությունը որպես իրավաբանական փաստ).

«Քրեական իրավունք» (օրինականության սկզբունքը, դատական հայեցողության սահմանները, contra legem իրավունքի զարգացումը).

«Իրավական ուսմունքների պատմություն» (հիմնական իրավունքների փիլիսոփայական հիմքերը, Ռադբրուխի դոկտրինը).

«Միջազգային իրավունք» (Եվրոպական կոնվենցիայի ազդեցությունը մեկնաբանման և պրակտիկայի վրա):

1.4. Դասընթացի ծրագրի յուրացման արդյունքները

Դասընթացի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

Իմանա.

1. հիմնական իրավունքների անձնային և առարկայական ոլորտի որոշման հիմնական դոկտրինալ մոտեցումները, դրանց համաչափ սահմանափակման պայմանները (ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված).
2. իրավունքից հրաժարվելու հասկացությունը և տեսակները (պետականորեն ճանաչված իրավունքից հրաժարվելը, սուբյեկտիվ իրավունքի իրականացումից հրաժարվելը, միջամտության համաձայնություն տալու միջոցով հրաժարվելը, հակաիրավական արարք կատարելու միջոցով հրաժարվելը (forfeiture by wrongdoing).
3. իրավունքի չարաշահման իրավական հետևանքները (ներառյալ դատական պաշտպանությունից հրաժարվելը).
4. ՀՀ-ում իրավական ակտերի համակարգը. նորմատիվ, անհատական, ներքին (լոկալ) ակտերը, դրանց տարբերակիչ հատկանիշները.
5. ենթաօրենսդրական ակտերի օրինականության պայմանները («օրենքի հիման վրա», «լիազորող նորմ»), ՀՀ վճռաբեկ և սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումները.
6. իրավական ակտերի մեկնաբանման մեթոդները (տեքստային, համատեքստային, արտատեքստային, օրիգինալիստական, ռեալիստական).
7. lex superior, lex specialis, lex posterior կոլիզիոն կանոնները, ճյուղային առաջնությունը.
8. contra legem դոկտրինի էությունը, Գ. Ռադբրուխի բանաձևը, օրենքի տառին հակառակ

իրավունքի զարգացման լեգիտիմացումը և սահմանները.

9. լռության իրավական նշանակությունը, ենթադրյալ համաձայնության տարբերությունը ֆիկցիայից և կանխավարկածից, լռության ռեժիմները (tacit waiver, պասիվ խաբեություն, էստոպել).

Կարողանա.

1. վերլուծել և տարանջատել հիմնական իրավունքների պաշտպանության անձնային և առարկայական ոլորտները.
2. որակել իրավունքից հրաժարվելը և տարբերել այն պասիվ անգործությունից.
3. բացահայտել իրավունքի չարաշահումը կոնկրետ փաստական իրավիճակներում և հիմնավորել իրավական հետևանքները.
4. տարանջատել նորմատիվ, անհատական և ներքին (լոկալ) իրավական ակտերը, այդ թվում՝ «ինքնատիպ» և խառը բնույթի ակտերը.
5. ստուգել ենթաօրենսդրական ակտի օրինականությունը՝ «օրենքի հիման վրա» պայմանի պահպանման տեսանկյունից.
6. կիրառել մեկնաբանման տարբեր մեթոդներ նորմատիվ ակտերի և դատական որոշումների տեքստերի նկատմամբ.
7. լուծել իրավական նորմերի միջև կոլիզիաները՝ օգտագործելով կոլիզիոն կանոնները.
8. հիմնավորել կոնկրետ գործով contra legem իրավունքի զարգացման թույլատրելիությունը կամ անթույլատրելիությունը.
9. որոշել լռության իրավական հետևանքները (համաձայնություն, հրաժարում, էստոպել, հակահիրավական անգործություն).

Ունակ լինի (տիրապետի).

1. դոկտրինալ աղբյուրների և իրավունքի տեսության խնդիրների վերաբերյալ դատական պրակտիկայի քննադատական վերլուծության հմտություններին.
2. իրավաբանական փաստարկման հմտություններին՝ բանավոր քննարկումների (սեմինարներ) և գրավոր աշխատանքների (շարադրություններ, քննական իրավիճակային խնդիրներ) ժամանակ.
3. տարբեր տեսակի իրավական ակտերը տարանջատելու և դրանց իրավաբանական ուժը գնահատելու հմտություններին.
4. տեքստային, համատեքստային և արտատեքստային եղանակների կիրառմամբ իրավական նորմերը մեկնաբանելու հմտություններին.
5. կոլիզիաները լուծելու և կիրառելի նորմի ընտրությունը հիմնավորելու հմտություններին.
6. վերլուծական հարցի պատասխան և իրավիճակային խնդիր գրավոր ձևակերպելու՝ մանրամասն իրավական հիմնավորումով, հմտություններին:

2. Առարկայական ծրագիրը

2.1. Նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է իրավագիտության հիմնարար խնդիրների ընդհանրացված և համակարգված արտացոլման հիման վրա ձևավորել գիտական իրավաբանական աշխարհայացք և ապահովել գործող իրավաբանի համար անհրաժեշտ մասնագիտական

մշակույթի բարձր մակարդակ ընդլայնելով նրա մասնագիտական տեսլականի շրջանակը, ինչը թույլ կտա ճիշտ կողմնորոշվել ապագա գործունեության ընթացքում իրավական խնդիրների հայտնաբերման և լուծման հարցում:

Դասընթացի ուսումնասիրության խնդիրներն են.

1. որոշել իրավագիտության տեղն ու դերը սոցիալ-հումանիտար գիտելիքի համակարգում և ժամանակակից հասարակության արդիականացման գործում.
2. ձեռք բերել ստեղծագործ իրավական մտածողության և գիտահետազոտական գործունեության հմտություններ.
3. զարգացնել իրավունքի ճանաչման գիտական մեթոդները հասկանալու և կիրառելու կարողություն.
4. յուրացնել հասարակության իրավական համակարգի զարգացման և հասարակական ու պետական կյանքի իրավական կարգավորման կատարելագործման ներկա փուլի առավել հիմնարար խնդիրները:
5. Դասընթացը ապահովում է շրջանավարտի պատրաստվածությունը նորմաստեղծ և իրավակիրառ մասնագիտական գործունեության տեսակներին:

2.2. Դասընթացի ծանրաբեռնվածության ծավալը և ուսումնական աշխատանքի ձևերը

Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 3 ակադեմիական կրեդիտ (108 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4 ուսումնական տարվա 2 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր

1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1.Դասախոսություններ	**16**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**20**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	

2.3. Թեմատիկ պլանը

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Հիմնական իրավունքները, պաշտպանության ոլորտները և սահմանափակումները Հիմնական «իրավունք» և «ազատություն»: Հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտը: Հիմնական իրավունքի սահմանափակումը: Հիմնական իրավունքի սահմանափակման արդարացումը (սահմանափակման սահմանափակումը): Հիմնական իրավունքի ստուգման սխեման	**6**	**3**	**3**
Թեմա 2. Իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Անհատական իրավական ակտերը: Նորմատիվ իրավական ակտերը: Լոկալ (ներքին) իրավական ակտերը: Նորմատիվ բնույթի լոկալ	**6**	**3**	**3**

իրավական ակտի և նորմատիվ իրավական ակտի հարաբերակցությունը:			
Թեմա 3. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը: Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող մարմիններին որոշելը: Ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները:	**6**	**3**	**3**
Թեմա 4. Իրավական ակտերի մեկնաբանման հիմնախնդիրները Մեկնաբանման նորմերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Մեկնաբանման կանոնները	6	**3**	**3**
Թեմա 5. Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման տեսական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման լեգիտիմացումը և զսպումների կառուցակարգերը: Օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում	**4**	**3**	**3**
Թեմա 6. Լռությունը և լռելյայն համաձայնությունն իրավահարաբերությունների կառուցակարգում Իրավական նշանակություն ունեցող լռությունը: Լռության և դրանից բխող ֆիկտիվ բնույթի եզրահանգումների իրավական ռեժիմները	**4**	**3**	**3**
Ընդամենը	**32**	**16**	**16**

2.4. Դասընթացի բաժինների համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Հիմնական իրավունքները, պաշտպանության ոլորտները և սահմանափակումները

Հիմնական «իրավունք» և «ազատություն»: Հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտը: Հիմնական իրավունքի սահմանափակումը: Հիմնական իրավունքի սահմանափակման արդարացումը (սահմանափակման սահմանափակումը): Հիմնական իրավունքի ստուգման սխեման

Թեմա 2. Իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում

Անհատական իրավական ակտերը: Նորմատիվ իրավական ակտերը: Լոկալ (ներքին) իրավական ակտերը: Նորմատիվ բնույթի լոկալ իրավական ակտի և նորմատիվ իրավական ակտի հարաբերակցությունը

Թեմա 3. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը

Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը: Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող մարմիններին որոշելը: Ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները

Թեմա 4. Իրավական ակտերի մեկնաբանման հիմնախնդիրները Մեկնաբանման նորմերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Մեկնաբանման կանոնները

Թեմա 5. Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման տեսական հիմնախնդիրները: Contra legem իրավունքի զարգացման լեգիտիմացումը և զսպումների կառուցակարգերը: Օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում

Թեմա 6. Լռությունը և լռելյայն համաձայնությունն իրավահարաբերությունների կառուցակարգում

Իրավական նշանակություն ունեցող լռությունը: Լռության և դրանից բխող ֆիկտիվ բնույթի եզրահանգումների իրավական ռեժիմները

2.5. Գրականության ցանկ

2.5.1. Հիմնական գրականություն

1. Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները. Ուսումնական ձեռնարկ / Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Երևան: Քոփի Փրինթ, 2024. – 492 c.
2. Կոլիզիոն իրավունք. Գիտագործնական ձեռնարկ / Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր.: ՀՌՀ հրատ., 2023. – 376 c.
3. Պետության և իրավունքի տեսություն. Ուսումնական ձեռնարկ / Կոլեկտիվ հեղինակներ՝ խմբ. Ա. Ղամբարյանի և Մ. Մուրադյանի. – Եր.: Լուսաբաց, 2023. – 692 c.
4. Гамбарян А.С. Молчание в праве (общетеоретические и уголовно-процессуальные аспекты): монография. – Ереван: Тигран Мец, 2020. – 312 с.
5. Гамбарян А.С. Отказ от права и вопросы уголовно-процессуального вмешательства: монография / науч. ред. проф. А.В. Смирнова. – М.: Юрлитинформ, 2018. – 352 с.
6. Гамбарян А.С., Даллакян Л.Г. Коллизионные нормы и их конкуренция: монография. – М.: Юрлитинформ, 2019. – 160 с.
7. Малиновский А.А. Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование): монография. – М.: Юрлитинформ, 2007. – 352 с.
8. Марченко М.Н. Теория государства и права: учебник. – 3-е изд., перераб. и доп. – М.: Проспект, 2012.
9. Морозова Л.А. Теория государства и права: учебник. – 4-е изд., перераб. и доп. – М., 2010.
10. Поротикова О.А. Проблема злоупотребления субъективным гражданским правом: монография. – 3-е изд. – М.: Юрайт, 2022. – 241 с.
11. Теория государства и права: учебник / коллектив авторов, отв. ред. А.В. Малько. – 4-е изд. – М.: КНОРУС, 2012.
12. Теория государства и права: учебник для юридических вузов и факультетов / под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. – М.: ИНФРА-М – НОРМА, 2002.

2.5.2. Լրացուցիչ գրականություն

1. Ղամբարյան Ա.Ս. *Contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացում // Գիտական Արցախ. – 2021. – № 3 (10). – էջեր 86–97.
2. Ղամբարյան Ա.Ս. Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնականացումը ՀՀ-ում // Օրինականություն. – 2023. – № 133. – էջեր 61–101.
3. Ղամբարյան Ա.Ս. Իրավունքի և օրենքի կոլիզիաները իրավունքի փիլիսոփայությունում // Գիտական Արցախ. – 2021. – № 1 (8). – էջեր 75–76.
4. Ղամբարյան Ա.Ս. Իրավունքի *extra legem* և *contra legem* զարգացումն օրենսդրական փակ ցանկերի պարագայում // Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի տեղեկագիր. – 2025. – № 1 (118). – էջեր 9–39.
5. Ղամբարյան Ա.Ս. Հանրային իրավունքի զարգացումը օրենքին հակառակ (*contra legem*) «օրենքը չի պահանջում անհնարինը» իրավական մաքսիմի հիման վրա // Բանբեր

արդարադատության ակադեմիայի. – 2023. – № 1 (9). – էջեր 47–67.
6. Ղամբարյան Ա.Ս. ՀՀ քրեական դատավարության իրավունքի զարգացումը Օրենսգրքին հակառակ (*contra legem*) // Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի տեղեկագիր. – 2022. – № 1 (105). – էջեր 19–70.
7. Ղամբարյան Ա.Ս. Իրավաընկալումը և *contra legem* իրավունքի զարգացումը // Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի տեղեկագիր. – 2024. – № 2 (114). – էջեր 11–48.
8. Ղամբարյան Ա.Ս. Օրենքից դուրս (*extra legem*) և օրենքին հակառակ (*contra legem*) իրավունքի զարգացման դոկտրինը քրեադատավարական ընդդատությունը որոշելիս // Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի տեղեկագիր. – 2021. – № 3 (103). – էջեր 22–46.
9. Ղամբարյան Ա.Ս. Օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում // Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի տեղեկագիր. – 2023. – № 2 (110). – էջեր 10–43.
10. Ղամբարյան Ա.Ս., Ավոյան Ք. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և իրավաչափության պայմանները // Օրինականություն. – 2016. – № 91. – էջեր 23–34.
11. Ղամբարյան Ա.Ս., Կուպելյանց Ա. Հին և նոր նորմերի կոլիզիաների լուծումը. հետևողական անտրամաբանություն, թե՞ անտրամաբանական հետևողականություն // Դատական իշխանություն. – 2018. – № 5-6 (227-228). – էջեր 3–10.
12. Агарков М.М. Проблема злоупотребления правом в советском гражданском праве // Известия АН СССР. Отделение экономики и права. – 1946. – № 6. – С. 424–436.
13. Аллахвердиев И.Г. О допустимости толкования *contra legem*: философско-правовые и формально-юридические аспекты // Цивилистика. – 2024. – Т. 1, № 1.
14. Аллахвердиев И.Г. О толковании *contra legem* и судейском произволе // Вестник экономического правосудия Российской Федерации. – 2025. – № 4.
15. Аллахвердиев И.Г. Понятие толкования *contra legem* и его место в системе видов толкования // Теория государства и права. – 2022. – № 4 (29).
16. Аллахвердиев И.Г. Сбалансированная модель толкования *contra legem*: попытка обоснования // Право и политика. – 2021. – № 12. – С. 69–82.
17. Васильева Т.А. Акты делегированного законодательства как источник публичного права зарубежных стран // Труды Института государства и права РАН. – 2011. – № 1. – С. 171–194.
18. Волков А.В. Злоупотребление гражданскими правами: проблемы теории и практики: монография. – М.: Волтерс Клувер, 2009. – 452 с.
19. Волкова С.Н. Регламентарные акты и их место в системе нормативных правовых актов // Сибирский юридический вестник. – 2013. – № 4. – С. 11–15.
20. Гамбарян А.С. Доктрина развития права вне закона (*extra legem*) и вопреки закону (*contra legem*) при определении подсудности // Судебная власть и уголовный процесс. – 2022. – № 4. – С. 7–22.

21. Гамбарян А.С. Легитимация развития права *contra legem* и сдерживающие механизмы // Вестник Ереванского университета. Право. – 2024. – Т. 15, № 2 (41). – С. 70–93.
22. Гамбарян А.С. Маскировка развития права *contra legem* и парадокс следования правилу // Вестник Академии правосудия. – 2024. – № 2 (12). – С. 42–54.
23. Гамбарян А.С. Отказ народом от объективных прав // Конституционное и муниципальное право. – 2020. – № 2. – С. 7–10.
24. Гамбарян А.С. Отказ от права (утрата права) на встречный опрос посредством совершения противоправного деяния (*forfeiture by wrongdoing*) // Всероссийский криминологический журнал. – 2019. – Т. 13, № 2. – С. 322–331.
25. Гамбарян А.С. Отказ от субъективного права молчанием (*tacit waiver*) // Теория и практика общественного развития. – 2018. – № 4. – С. 67–71.
26. Гамбарян А.С. Пассивное поведение (бездействие): использование субъективного права или отказ от реализации субъективного права // Lex Russica. – 2019. – № 2 (147). – С. 29–40.
27. Гамбарян А.С. Принцип законности и положение «судья подчиняется закону» в контексте доктрины развития права *contra legem* // Правоприменение. – 2023. – Т. 7, № 4. – С. 15–24.
28. Гамбарян А.С. Развитие парламентом права *contra constitutionem* в Республике Армения // Сравнительное конституционное обозрение. – 2022. – № 4 (149). – С. 129–153.
29. Гамбарян А.С. Развитие права вопреки закону (*contra legem*) в Республике Армения // Государство и право. – 2023. – № 5. – С. 145–157.
30. Гамбарян А.С. Развитие права вопреки закону (*contra legem*) на основе правовой максимы «закон не требует невозможного» // Вестник Пермского университета. Юридические науки. – 2023. – № 4 (62). – С. 552–567.
31. Гамбарян А.С. Развитие права советскими судьями вопреки закону (*contra legem*) // Судебная власть и уголовный процесс. – 2023. – № 2. – С. 7–26.
32. Гамбарян А.С. Развитие права *extra legem* и *contra legem* в случае закрытых законодательных перечней // Lex Russica. – 2026. – Т. 79, № 1(230). – С. 19–36.
33. Гамбарян А.С. Развитие уголовно-процессуального права Армении вне закона (*extra legem*) и вопреки закону (*contra legem*) // Вестник Санкт-Петербургского университета. Право. – 2024. – Т. 15, № 1. – С. 206–224.
34. Гамбарян А.С. Указ Президента РФ № 1400 – правомерный акт *contra constitutionem* // Вестник Конституционного Суда Республики Армения. – 2023. – № 1 (109). – С. 8–34.
35. Гамбарян А.С. Условия «на основании закона» и «уполномочивающей нормы» для принятия подзаконного акта // Вестник Ереванского университета. Право. – 2024. – Т. 15, № 1 (40). – С. 7–28.
36. Гамбарян А.С. Юридическая концепция революции Л.И. Петражицкого и развитие интуитивного права *contra legem* // Правоведение. – 2025. – Т. 69, № 2. – С. 254–270.
37. Грибанов В.П. Пределы осуществления и защиты гражданских прав. – М.: Российское право, 1992. – 204 с.

38. Садиков О.Н. Злоупотребление правом в Гражданском кодексе России // Хозяйство и право. – 2002. – № 2. – С. 41–48.

Ինտերակտիվ կայքեր՝

www.arlis.am

www.parliament.am:

www.concourt.am

3. Գնահատման միջոցները

3.1. Իրավասությունների ցանկը

Հիմնական իրավունքների պաշտպանության ոլորտներն ու սահմանափակումները վերլուծելու և մեկնաբանելու, կոլիզիաներն ու բացերը հայտնաբերելու ունակությունը ձևավորվում է 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ թեմաների շրջանակներում: Այդ իրավասությունը ստուգվում է սեմինարային հարցերի և առաջադրանքների միջոցով:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում իրավական ակտերի տեսակները (նորմատիվ, անհատական, ներքին, ենթաօրենսդրական) տարանջատելու և դրանք որակելու ունակությունը ձևավորվում է 2-րդ և 3-րդ թեմաների շրջանակներում: Այդ իրավասությունը ստուգվում է քննարկումների, շարադրությունների և վերլուծական հարցերի միջոցով:

Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը տարանջատելու, ինչպես նաև «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները գնահատելու ունակությունը ձևավորվում է 3-րդ թեմայի շրջանակներում: Այդ իրավասությունը ստուգվում է շարադրությունների, վերլուծական հարցերի և իրավիճակային խնդիրների միջոցով:

Իրավական ակտերի մեկնաբանման կանոնները կիրառելու և մեկնաբանման տարբեր եղանակները տարբերակելու ունակությունը ձևավորվում է 4-րդ թեմայի շրջանակներում: Այդ իրավասությունը ստուգվում է սեմինարային հարցերի, շարադրությունների և վերլուծական հարցերի միջոցով:

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական և տեսական հիմնախնդիրները վերլուծելու, դրա լեգիտիմացումը և զսպումների կառուցակարգերը գնահատելու ունակությունը ձևավորվում է 5-րդ թեմայի շրջանակներում: Այդ իրավասությունը ստուգվում է կլոր սեղանի քննարկումների, շարադրությունների և ստուգողական առաջադրանքների միջոցով:

Լռության իրավական նշանակությունը որոշելու, լռությունից բխող ֆիկտիվ բնույթի եզրահանգումների իրավական ռեժիմները վերլուծելու, ինչպես նաև դրանց իրավական հետևանքները որոշելու ունակությունը ձևավորվում է 6-րդ թեմայի շրջանակներում: Այդ իրավասությունը ստուգվում է իրավիճակային խնդիրների միջոցով:

3.2. Իրավասությունների գնահատման ցուցանիշների և չափանիշների նկարագրությունը

Վերլուծական կարողություններ

Բարձր մակարդակի չափանիշներով (A–B, 76–100 միավոր) ուսանողն առանձնացնում է խնդրի բոլոր էական կողմերը, իրականացնում է ինքնուրույն իրավական վերլուծություն, համեմատում է դոկտրինալ մոտեցումները հիմնական իրավունքների պաշտպանության ոլորտների և սահմանափակումների, իրավական ակտերի տեսակների, ենթաօրենսդրական ակտերի օրինականության պայմանների, իրավական ակտերի մեկնաբանման մեթոդների, contra legem իրավունքի զարգացման դոկտրինի, ինչպես նաև լռության և լռելյայն համաձայնության իրավական ռեժիմների վերաբերյալ. բացահայտում է իրավական կոլիզիաների լուծման օրինաչափությունները. վերլուծում է հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության պայմանները (ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված). ազատորեն կիրառում է մեկնաբանման կանոնները (տեքստային, համատեքստային, արտատեքստային) և կոլիզիոն կանոնները (lex superior, lex specialis, lex posterior):

Միջինից բարձր մակարդակի չափանիշներով (C, 64–75 միավոր) ուսանողը բացահայտում է խնդրի հիմնական կողմերը, վերլուծությունն իրականացնում է ինքնուրույն եզրահանգումների առանձին տարրերով. ընդհանուր առմամբ ճիշտ է որոշում նորմատիվ և անհատական իրավական ակտերի, ներքին (լոկալ) իրավական ակտերի առանձնահատկությունները. ցուցաբերում է ըմբռնում ենթաօրենսդրական ակտերի «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանների, ինչպես նաև contra legem դոկտրինի լեգիտիմացման և զսպումների կառուցակարգերի վերաբերյալ:

Միջին մակարդակի չափանիշներով (D–E, 40–63 միավոր) ուսանողը վերարտադրում է հիմնական մոտեցումները, սակայն վերլուծությունը կրում է նկարագրական բնույթ. թույլ է տալիս առանձին անճշտություններ իրավական ակտերի տեսակների բնութագրման, մեկնաբանման կանոնների կիրառման, contra legem զարգացման և լռության իրավական ռեժիմների վերաբերյալ. դժվարանում է տարբերակել հիմնական իրավունքների պաշտպանության անձնային և առարկայական ոլորտները:

Ցածր մակարդակի չափանիշներով (FX–F, 0–39 միավոր) ուսանողը չի կարողանում առանձնացնել խնդրի էական կողմերը, վերլուծությունը բացակայում է կամ կրում է մակերեսային բնույթ. չի տարբերում նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտերը. չգիտի contra legem դոկտրինի հիմնական դրույթները և լռության իրավական նշանակությունը:

Իրավական փաստարկում

Բարձր մակարդակի դեպքում (A–B, 76–100 միավոր) ուսանողը ներկայացնում է մանրամասն իրավական փաստարկում՝ հղումներով դոկտրինին, նորմատիվ ակտերին (ներառյալ ՀՀ Սահմանադրությունը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները) և իրավակիրառ պրակտիկայի օրինակներին. հիմնավորում է դիրքորոշումը ենթաօրենսդրական ակտերի օրինականության, իրավական ակտերի մեկնաբանման, contra legem իրավունքի զարգացման թույլատրելիության, ինչպես նաև լռության իրավական հետևանքների (համաձայնություն, հրաժարում, էստոպել) վերաբերյալ. կիրառում է իրավահամեմատական մեթոդ:

Միջինից բարձր մակարդակի դեպքում (C, 64–75 միավոր) փաստարկումն ընդհանուր

առմամբ հետևողական է, առկա են առանձին հղումներ իրավունքի նորմերին (ՀՀ Սահմանադրություն, օրենքներ) և գիտական մոտեցումներին. բերում է պրակտիկայի օրինակներ:

Միջին մակարդակի դեպքում (D–E, 40–63 միավոր) փաստարկումը մասնատված է, դոկտրինին և նորմատիվ ակտերին հղումներ կան, սակայն ոչ միշտ են համապատասխան. օրինակները միշտ չէ, որ արդիական են:

Ցածր մակարդակի դեպքում (FX–F, 0–39 միավոր) փաստարկումը բացակայում է կամ չի համապատասխանում առաջադրված հարցին. ուսանողը չի կարող հիմնավորել սեփական դիրքորոշումը:

Հստակություն և ընկալելիություն

Բարձր մակարդակի դեպքում (A–B, 76–100 միավոր) պատասխանը կառուցված է, օգտագործված են ճշգրիտ իրավական հասկացություններ, եզրակացությունները ձևակերպված են պարզ: Ցուցաբերում է ըմբռնում հետևյալ հասկացությունների փոխհարաբերության՝ նորմատիվ և անհատական իրավական ակտ, լոկալ (ներքին) և նորմատիվ ակտ, ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված ակտ, contra legem և extra legem, լռություն (ենթադրյալ համաձայնություն) և էստոպել, հիմնական իրավունքի պաշտպանության անձնային և առարկայական ոլորտներ:

Միջինից բարձր մակարդակի դեպքում (C, 64–75 միավոր) պատասխանը բավականաչափ հասկանալի է, տերմինաբանությունն առավելապես օգտագործվում է ճիշտ. առանձին հասկացություններ կիրառվում են ոչ ճշգրիտ:

Միջին մակարդակի դեպքում (D–E, 40–63 միավոր) պատասխանն ընդհանուր է, տերմինաբանությունը միշտ չէ, որ ճշգրիտ է, թույլ են տրվում սխալներ հատուկ տերմինների գործածության մեջ (օրինակ՝ շփոթում է նորմատիվ և անհատական ակտերը, ներքին լոկալ ակտի և նորմատիվ ակտի միջև տարբերությունը, contra legem և extra legem զարգացումը):

Ցածր մակարդակի դեպքում (FX–F, 0–39 միավոր) պատասխանն անհետևողական է, իրավական տերմինաբանությունն օգտագործվում է սխալ կամ բացակայում է. չի տարբերում իրավական ակտերի հիմնական տեսակները և մեկնաբանման մեթոդները:

Համակարգվածություն և կառուցվածքայնություն

Բարձր մակարդակի դեպքում (A–B, 76–100 միավոր) պատասխանը տրամաբանորեն կառուցված է, առանձնացված են ներածությունը, հիմնական մասը, եզրակացությունները. նկատվում է համակարգային մոտեցում իրավական երևույթների վերլուծության նկատմամբ (հիմնական իրավունքների ստուգման սխեմայի, իրավական ակտերի հիերարխիայի, contra legem դոկտրինի և լռության իրավական ռեժիմների փոխկապակցվածության ըմբռնում):

Միջինից բարձր մակարդակի դեպքում (C, 64–75 միավոր) պատասխանն ընդհանուր առմամբ տրամաբանական է, կառուցվածքը մասամբ պահպանված է. եզրակացություններն առկա են, սակայն բավարար մանրամասն չեն:

Միջին մակարդակի դեպքում (D–E, 40–63 միավոր) խախտված է շարադրման տրամաբանությունը, եզրակացությունները բացակայում են կամ չեն համապատասխանում

բովանդակությանը. շարադրանքն անհամակարգ է:

Ցածր մակարդակի դեպքում (FX–F, 0–39 միավոր) պատասխանն անհամակարգ է, կառուցվածքը բացակայում է. շարադրանքը քաոսային է, չի նկատվում հասկացությունների միջև կապ:

3.3. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ

3.3.1. Սեմինար պարապմունքների ժամանակ վերլուծական քննարկման հարցեր (ըստ թեմաների)

Թեմա 1. Հիմնական իրավունքները, պաշտպանության ոլորտները և սահմանափակումները

1. Ո՞րն է տարբերությունը «իրավունք» և «ազատություն» հասկացությունների միջև:
2. Ո՞րն է հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտը:
3. Ի՞նչ է հիմնական իրավունքի սահմանափակումը:
4. Ի՞նչ է հիմնական իրավունքի սահմանափակման արդարացումը (սահմանափակման սահմանափակումը):
5. Ո՞րն է հիմնական իրավունքի ստուգման սխեման:
6. Ի՞նչ պայմաններում է հիմնական իրավունքի սահմանափակումը ճանաչվում համաչափ (ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված):

Թեմա 2. Իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում

1. Որո՞նք են անհատական իրավական ակտերի առանձնահատկությունները:
2. Որո՞նք են նորմատիվ իրավական ակտերի առանձնահատկությունները:
3. Որո՞նք են ներքին (լոկալ) իրավական ակտերի առանձնահատկությունները:
4. Ինչպե՞ս են հարաբերակցվում նորմատիվ բնույթի լոկալ իրավական ակտը և նորմատիվ իրավական ակտը:

Թեմա 3. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը

1. Ո՞րն է տարբերությունը ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերի միջև:
2. Ինչպե՞ս են որոշվում ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող մարմինները:
3. Ի՞նչ է նշանակում «օրենքի հիման վրա» պայմանը ենթաօրենսդրական ակտի համար:
4. Ի՞նչ է նշանակում «լիազորող նորմի» պայմանը ենթաօրենսդրական ակտի համար:

Թեմա 4. Իրավական ակտերի մեկնաբանման հիմնախնդիրները

1. Որո՞նք են մեկնաբանման նորմերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում:
2. Որո՞նք են մեկնաբանման կանոնները:
3. Ո՞րն է տարբերությունը տեքստային, համատեքստային և արտատեքստային մեկնաբանման միջև:

Թեմա 5. Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը

1. Որո՞նք են *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական հիմնախնդիրները:
2. Որո՞նք են *contra legem* իրավունքի զարգացման տեսական հիմնախնդիրները:
3. Ի՞նչ է *contra legem* իրավունքի զարգացման լեգիտիմացումը:
4. Որո՞նք են *contra legem* իրավունքի զարգացման զսպումների կառուցակարգերը:
5. Ինչպե՞ս են հարաբերակցվում օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի համատեքստում:

Թեմա 6. Լռությունը և լռելյայն համաձայնությունն իրավահարաբերությունների կառուցակարգում

1. Ո՞րն է իրավական նշանակություն ունեցող լռությունը:
2. Ե՞րբ է լռությունը ճանաչվում իրավաբանական փաստ:
3. Ինչպիսի՞ն են լռության և դրանից բխող ֆիկտիվ բնույթի եզրահանգումների իրավական ռեժիմները:
4. Ինչո՞վ է լռությամբ (ենթադրյալ) համաձայնությունը տարբերվում պոզիտիվ համաձայնությունից:
5. Լռությունը միշտ՞ է համաձայնության նշան:

3.3.2. Էսսեների, ռեֆերատների, վերլուծական աշխատանքների թեմաներ (օրինակներ)

1. Հիմնական «իրավունք» և «ազատություն» հասկացությունների տարբերակումը.
2. Հիմնական իրավունքի սահմանափակման արդարացումը (սահմանափակման սահմանափակումը).
3. Հիմնական իրավունքի ստուգման սխեմայի կիրառումը ՀՀ սահմանադրական արդարադատության պրակտիկայում.
4. Անհատական, նորմատիվ և լոկալ իրավական ակտերի տարանջատման չափանիշները.
5. Նորմատիվ բնույթի լոկալ իրավական ակտի և նորմատիվ իրավական ակտի հարաբերակցությունը.
6. Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված ակտերի տարբերությունները.
7. «Օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները ենթաօրենսդրական ակտ ընդունելիս.
8. Իրավական ակտերի մեկնաբանման կանոնները ՀՀ իրավական համակարգում.
9. *Contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի իրավափիլիսոփայական հիմքերը.
10. *Contra legem* իրավունքի զարգացման լեգիտիմացումը և զսպումների կառուցակարգերը.
11. Օրինականության սկզբունքը և «դատավորը ենթակա է օրենքին» դրույթը *contra legem* դոկտրինի համատեքստում.
12. Լռության իրավական նշանակությունը և դրա ռեժիմները իրավահարաբերություններում.
13. Լռությունից բխող ֆիկտիվ բնույթի եզրահանգումները. ֆիկցիա, թե՞ կանխավարկած.

3.3.3. Սպուգարքի օրինակելի հարցեր (տոմս)

Տոմսը ներառում է մեկ վերլուծական հարց և մեկ իրավիճակային խնդիր: Ստորև բերված են օրինակներ (սպառիչ ցանկ չէ):

Վերլուծական հարցի օրինակ թիվ 1

Մեկնաբանեք դոկտրինում օգտագործվող «ինքնատիպ նորմատիվ իրավական ակտեր» հասկացությունը: Թվարկեք ինքնատիպ նորմատիվ իրավական ակտի օրինակները:

Վերլուծական հարցի օրինակ թիվ 2

Բացատրեք սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու (*waiver*) և իրավունքի չարաշահման տարբերությունը: Բերեք մեկական օրինակ դատական պրակտիկայից (իրական կամ հիպոթետիկ) յուրաքանչյուր երևույթի համար:

Վերլուծական հարցի օրինակ թիվ 3

Ներկայացրեք *contra legem* և *extra legem* իրավունքի զարգացման տարբերությունները: Բերեք կոնկրետ օրինակներ:

Վերլուծական հարցի օրինակ թիվ 4

Ձևակերպեք Գ. Ռադբրուխի բանաձևը: Բացատրեք դրա նշանակությունը *contra legem* իրավունքի զարգացման համատեքստում:

3.4. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը

3.4.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը

Սեմինար պարապմունքները ներառում են տեսական հարցերի բանավոր քննարկում: Գնահատվում են ընկալման խորությունը, փաստարկելու կարողությունը, տերմինաբանությանը տիրապետելը:

Ուսանողից կարող է պահանջվել ներկայացնելու գրավոր շարադրություն կամ ռեֆերատ: Ծավալը՝ 5–7 էջ: Գնահատվում են վերլուծության ինքնուրույնությունը, դոկտրինի օգտագործումը, ձևավորումը:

3.4.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն)

Ստուգարքը (քննությունը) անցկացվում է գրավոր ձևաչափով: Տոմսի կառուցվածքը ներառում է մեկ վերլուծական հարց և մեկ իրավիճակային խնդիր: Կատարման ժամանակը 60 րոպե է: Ուսանողներին չի տրամադրվում լրացուցիչ նյութեր, սակայն դասախոսի հայեցողությամբ թույլատրվում է օգտագործել նորմատիվ ակտերի տեքստեր:

3.4.3. Գնահատման ընթացակարգը

Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0–100 միավոր սանդղակով՝ հետագա փոխարկմամբ 7-բալյա համակարգի: 88–100 միավորի դեպքում տրվում է A (գերազանց), 76–87-ի դեպքում՝ B (շատ լավ), 64–75-ի դեպքում՝ C (լավ), 52–63-ի դեպքում՝ D (բավարար), 40–51-ի դեպքում՝ E (բավարար սահմանային), 20–39-ի դեպքում՝ FX (անբավարար, պահանջվում է վերամշակում), իսկ 0–19-ի դեպքում՝ F (անբավարար, պահանջվում է վերահանձնում):

Միավորների բաշխումը տոմսում կատարվում է հետևյալ կերպ. վերլուծական հարցը գնահատվում է մինչև 40 միավոր, իսկ իրավիճակային խնդիրը՝ մինչև 60 միավոր: Նշված բաշխումը կարող է փոփոխվել՝ կախված հարցերի բարդությունից:

3.4.4. Գնահատման չափանիշներ

Գնահատելիս հատկապես հաշվի են առնվում պատասխանի վերլուծական բնույթը (այլ ոչ թե սահմանումների պարզ թվարկումը), իրավական փաստարկման առկայությունը (ինչու է տվյալ մոտեցումը ճիշտ), կոնկրետությունը (հղումներ նորմատիվ ակտերին, դոկտրինալ

դիրքորոշումներին, օրինակներին), ինչպես նաև կառուցվածքայնությունը (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն յուրաքանչյուր ենթակետի համար):

3.4.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ

Սեմինար պարապմունքների համար անհրաժեշտ է մշակել լրացուցիչ ուսումնական կամ դոկտրինալ աղբյուրներ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:

Իրավիճակային խնդիրը լուծելիս պետք է հաջորդաբար կիրառել հետևյալ սխեման. փաստեր → իրավական խնդիր → նորմ/դոկտրին → փաստարկում → եզրակացություն:

Ստուգարքի (քննության) ժամանակ խորհուրդ է տրվում հստակ կառուցել պատասխանը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություն, ճիշտ օգտագործել իրավական տերմինաբանությունը, անհրաժեշտության դեպքում հղումներ կատարել ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ օրենքներին, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումը՝ հղումներով դոկտրինալ մոտեցումներին: